ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՌԹԻՎ
(Ըստ արխիվային փաստաթղթերի)

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արխիվները, հիրավի, կատարյալ գանձատուն են: Դարակներին դասավորված թղթապանակներն ինչպի՜սի տեղեկություններ ասես, որ չեն պարունակում: Ափսո՜ս, որ դրանք մեծ մասամբ քիչ են հայտնի դառնում հանրությանը:

Ահա թե ինչու, ողջունելի է «Ալեքսանդր Թամանյան» խորագրով փաստաթղթերի ու նյութերի լիակատար ժողովածուի լույս ընծայումը ՀՀ ԳԱԱ-ի հրատարակչության կողմից: Այն հրատարակության է պատրաստվել ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվների տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Արարատ Սարգսյանի, նույն արխիվի փոխտնօրեն, բանաս. գիտ. թեկնածու Էմմա Հովսեփյանի ու արխիվի բաժնի վարիչ Մարինե Մարտիրոսյանի համատեղ ջանքերով: Տասնամյակներ առաջ կազմված այս արժեքավոր ժողովածուն վերջապես լույս տեսավ[1]: Նրանում տարիների հաջորդականությամբ ներկայացվող փաստաթղթերը լույս են սփռում XX դարի մեծագույն ճարտարապետներից մեկի՝ Ալեքսանդր Թամանյանի բազմաբեղուն կյանքի ու գործունեության ոլորտների վրա[2]:

Ներկա հոդվածում նպատակադրվել եմ անդրադառնալ նշանավոր հայրենի գործունեության բնագավառներից միայն մեկին՝ մշակույթի և ճարտարապետության հուշարձանների պահպանության վերաբերյալ փաստաթղթերին, դրանք ներկայացնելով ըստ երկու փուլի.

Ա. Ռուսաստանում ապրած տարիներ:

Բ. Հայաստանում ապրած տարիներ:

Վերջինը՝ երկու ենթափուլերով՝

- *Առաջին Հանրապետության տարիներ:*
- *Սովետական ժամանակաշրջան:*

Պետերբուրգում և Մոսկվայում իրականացված իր մեծատաղանդ գործերով հայտնի դարձած ու մեծապես գնահատված, 1914-ից Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս, Պետերբուրգի արվեստի գործիչների նորաստեղծ միության նախագահ Ալեքսանդր Թամանյանը դեռ Պետերբուրգում գտնվելու ժամանակ հանդես եկավ ի պաշտպանություն մշակույթի և ճարտարապետության հուշարձանների, երբ 1917–1918 թթ.

---

1 *Լույս է տեսել 2000 թվականին, տողերիս հեղինակի և ճարտարապետության թեկնածու Նարեկ Սարգսյանի խմբագրությամբ:*

2 *Լ. Զորյան. Հոդվածներ, փաստաթղթեր, ժամանակակիցները նրա մասին. Երևան, 1960:*

Ռուսաստանում իրադրության փոփոխման կապակցությամբ, արվեստի գործերի նկատմամբ անհարիր վերաբերմունքի դեպքեր գրանցվեցին: Դրանց ավերումը կանխելու պարտականությունը ստանձնեց Ալեքսանդր Թամանյանի նախագահությամբ ստեղծված Պետերբուրգի արվեստի գործիչների միությունը:

Տեղեկանալով, որ Եկատերինոդար քաղաքում նպատակադրվել են հանել Եկատերինա Երկրորդ կայսրուհու բրոնզաձույլ արձանը, ձուլել ու դրանից հրանոթի պարկուճներ պատրաստել, քաղաքապետին ուղղված իր նամակում Թամանյանը պահանջում է անմիջապես կասեցնել գործողությունը, պատճառաբանելով, որ դա որպես արվեստի գործ ենթակա է պահպանման (փաստ. №59)[3]: Նույնպիսի նամակով նա դիմել է Տագանրոգ քաղաքի քաղաքապետին՝ Ալեքսանդր Առաջին կայսրի արձանը հանելու կապակցությամբ (№60): №№ 62, 63, 64 փաստաթղթերից առաջինը վերաբերում է Օդեսա քաղաքի հուշարձաններին սպառնացող վտանգին, հաջորդը՝ պալատական արժեքավոր գույքի պահպանությանը, երրորդը՝ Էրմիտաժի դրամագիտական հավաքածուում կրկնօրինակների վաճառքն արգելելուն: Կարևոր փաստաթուղթ է №67-ը: Ա. Թամանովի, Կ. Ռոմանովի և Ս. Նասեդկինի ստորագրությամբ ժամանակավոր կառավարության վարչապետին ուղղված նամակում հարց է հարուցվում արգելելու արվեստի գործերի հոսքը արտասահման, դիմումին կցելով հեղինակների մշակած օրենքի նախագիծը: №70 փաստաթուղթը նամակ է՝ ուղղված Ա. Թամանյանին, որով խնդրում են իր միջամտությունը՝ դադարեցնելու համար իշխան Վոլկոնսկիներին պատկանող դաստակերտի զավթումը շրջակա գյուղացիների կողմից: «Սուխանովոյի մեծ տան բովանդակությունը,– նշված է նամակում,– գնահատվում է միլիոններով, ամռան ամիսներին Մոսկվայից ամենօրյա այցելուներ ունի, որին կարող է նախանձել ուզածդ թանգարանը...»[4]:

№74 փաստաթուղթը ստորագրված է Ա. Թամանյանի կողմից ու թվագրված 1917 թ. նոյեմբերի 26-ով: Դա կոչ է հետևյալ բովանդակությամբ. «Արվեստի գործիչների միությունը համարելով, որ դեղարվեստի բոլոր գործերը՝ նկարներ, մարմար, բրոնզ, կարասիք և այլն, հանդիսանում են ռուս ժողովրդի արժեքավոր սեփականություն, դիմելով բոլոր քաղաքացիներին, թախանձագին խնդրում է դրանք պահպանել փչացումից ու կորստից, աջակցություն ցուցարերել նկարիչներին, քանզի նրանք իրենց պարտքն են համարում այդ գործերը փրկել կորստից»:

1917 թ. հոկտեմբերի 27-ով թվագրված №75 փաստաթուղթը քաղվածք է արվեստի գործիչների միության նախագահության արձանագրությունից: Դրանում հիշատակված է Բ. Վ. Ֆարմակովսկուց, Վ. Ու. Դուբենեցկուց և Կ. Կ. Ռոմանովից բաղկացած հանձնաժողովի զեկուցագիրը Ձմեռային պալատում արվեստի գործերի նկատմամբ ցուցաբերած վայրագությունների մասին: №76 փաստաթուղթը պարունակում է արվեստի գործիչների միության կոմիտեի լիազորների բողոքը Էրմիտաժում պահվող ուկ-

3 Այսուհետև բուն շարադրանքում կնշվի միայն փաստաթղթի համարը:

4 Սուխանովո գաստակերտը հետագայում տրամադրված էր ԽՍՀՄ ճարտարապետների միությանը որպես հանգստի տուն:

բաինական ծագում ունեցող հավաքածուները Ուկրաինային հանձնելու կապակցությամբ: Այն թվագրված է 1917-ի նոյեմբեր ամսով: Վերը հիշատակված փաստաթղթերով վկայված է Ալեքսանդր Թամանյանի Պետերբուրգում իրականացրած եռանդուն գործունեությունը ի պաշտպանություն մշակույթի հուշարձանների:

Ընդառաջելով Հայաստանի Առաջին Հանրապետության կառավարության հրավերին, Ալեքսանդր Թամանյանը 1919-ին ընտանիքով փոխադրվում է Երևան: Սիմոն Վրացյանն իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում նրան հիշատակում է որպես Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետ: Մի այլ փաստաթղթից տեղեկանում ենք, թե ինչ կապակցությամբ էր Ալեքսանդր Թամանյանը հրավիրվել Հայաստան: Դա զեկուցագիրը է Երևանի վերակառուցման իր կողմից մշակած գլխավոր հատակագծի մասին: Ստանձնելով այդպիսի պարտականություն, նա Հայաստանում էլ հավատարիմ մնաց մշակույթի հուշարձանների պահպանության դեռևս Պետերբուրգում որդեգրած դերին:

«Ալեքսանդր Թամանյան» ժողովածուում զետեղված №92 փաստաթուղթը՝ տրված Ալեքսանդր Թամանյանի անունով, տեղեկացնում է, որ Թամանյանը Անի է մեկնում «գեղարվեստական խնդիրներով»: Առավել կարևորը №95 փաստաթուղթն է՝ ստորագրված Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Ա. Թամանյանի ու Ա. Քալանթարի կողմից: Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարությանը ուղղված համատեղ դիմումում հարց է հարուցվել «Հնությունների պետական պահպանության կոմիտե» կազմակերպելու վերաբերյալ: «Մեր պատմական հայրենիքում ամենուրեք սփռված հնապատմական հուշարձանները,– նշված է դիմումում,– որ հայ ցեղի հոգու և մտքի արտադրությունն են, նրա բազմադարյան կյանքի ապացույցները՝ հանդիսանում են հայ ժողովրդի գերագույն հարստությունը և նորանոր ստեղծագործությանց անսպառ աղբյուրը, նրա բոլոր սերնդների համար»:

Ընդառաջելով այդ դիմումին, վերոհիշյալ նախարարության համակարգում ստեղծվում է Հնությունների պահպանության բաժին՝ Ալեքսանդր Թամանյանի նախագահությամբ: Այդ մասին է վկայում հաջորդ՝ №96 փաստաթուղթը: Դա զեկուցագիր է Թամանյանի ստորագրությամբ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարին՝ հնագիտական աշխատանքների կազմակերպման մասին: Զեկուցագրում նշված է. «Հնությունների պետական պահպանության դեռևս կազմվող կոմիտեն ներկայումս զբաղված է հնագիտական էքսպեդիցիայի կազմակերպման գործով: Այդ էքսպեդիցիան, որ աշխատելու է ամռան ու աշնան սկզբին, գործունեության հետևյալ ծրագիրն ունի»:

Հիշատակված են չորս հիմնական ուղղություններ.

1. Հնությունների ամբողջական ցուցակագրում:
2. Հուշարձանների վիճակն ու դիմացկունության չափը:
3. Տեղային հնադարանների հիմնում:

---

* ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 201, ց. 1, գ. 531:

4. Հսկողության կազմակերպում հուշարձանների պահպանությունը նշանակված պահակների կողմից:

Այդ նպատակով, ծրագրվում է Հայաստանը բաժանել պատմա-հնագիտական 10 շրջանների: Դրանցից հատկապես կարևորվում են Անիի, Տեկոր-Թալինի, Արագածոտն-Քասախի, Կոտայքի և Լոռի-Փամբակի շրջանները: Զեկուցագրի վերջում ներկայացված է կոմիտեում աշխատող մասնագետների թվաքանակը և գիտական արշավանքների կազմակերպման կապակցությամբ այն լրացնելու անհրաժեշտությունը:

Փաստորեն Հայաստանի պատմական հուշարձանների պետական պահպանության գործը հիմնադրվում է Առաջին Հանրապետության օրոք: Ալեքսանդր Թամանյանի նախագահությամբ ստեղծվում է Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, սակայն դրա գործունեության վերաբերյալ «Ալեքսանդր Թամանյան» գրքում այլ փաստաթղթեր չեն հանդիպում: Կոմիտեն հուշարձանների պահպանությունը դարձրեց պետական մտահոգության առարկա Հայաստանում սովետական կարգերի ստեղծման առաջին իսկ օրերից: Այդ են վկայում նաև այլ փաստաթղթեր: 1921 թ. սեպտեմբերին Հայաստանի նորաստեղծ կառավարության նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի նախաձեռնությամբ ստեղծվեց Հնությունների ու գեղարվեստական հուշարձանների պահպանության կոմիտե՝ Մարտիրոս Սարյանի գլխավորությամբ: Մեծանուն հայորդին 1921–1922 թթ. սկիզբ դրեց հայ ժողովրդի հոգևոր մասունքների հավաքման, ցուցակագրման և պահպանման գործին: Նա հետամուտ եղավ Թիֆլիսի թանգարան փոխադրված Անիի հնագիտական արշավախմբի հայտնաբերած դրամները, իրերը, խաչքարերը Հայաստան վերադարձնելու ու այլ միջոցառումների իրականացմանը[5]: Հետագայում Մարտիրոս Սարյանի զբաղվածության պատճառով, նրան փոխարինում է Աշխարհբեգ Քալանթարը, իսկ գիտ. քարտուղար է նշանակվում Գևորգ Ասատուրը[6]:

1920 թ. դեկտեմբերի 8 և 9-ով թվագրված №100 և №101 փաստաթղթերը զեկուցագրեր են՝ ուղղված Հայաստանի Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանին: Երկուսն էլ ստորագրված Ալեքսանդր Թամանյանի ու Աշխարհբեգ Քալանթարի կողմից: Անիի հնության հուշարձանների պահպանությունը հոգալու մասին №100 փաստագրում նշված է. «1918 թ. տաճիկների՝ Ախուրյանի աջ ափից հեռանալուց հետո, տեղի թուրքերն ու քրդերը, օգտվելով տեղում որևէ իշխանության բացակայությունից, ջարդ ու փչուր արին ու փչացրին Անի քաղաքի հնությունները, գլխավորապես այն բոլորը, որ հանդիսանում էին Անիում պրոֆեսոր Մառի ամբողջ 15 տարվա գիտական գործունեության արդյունքը: Քարուքանդի ենթարկելով հնությունները և բնակության տները՝ ինչքը կողոպտեցին, իսկ հնությունները կտոր-կտոր անելով, շպրտեցին Անիի ձորերը»: Այնուհետև, տեղեկացնելով հնագիտական արշավախմբի կողմից Անիում և Տեկորի շրջաններում կատարած աշխատանքների մասին, խնդրում են «Անին նորից կործանման ենթարկելուց փրկելու համար, բանակցել տաճիկ

---

5 Շ ու շ ա ն ի կ Դ ա վ թ յ ա ն. Հուշարձանների հովանավորողը.— «Գրական թերթ», 21 մարտի 1980:

6 Ս ո ւ. Ա. Թ ա մ ա ն յ ա ն. Հուշարձաններին նոր կյանք. Երևան, 1988, էջ 10:

իշխանությունների հետ, որպեսզի նոքա հատուկ ուշադրություն դարձնեն Անիի և առհասարակ հին հուշարձանների պահպանության վրա և առաջին հնարավորության դեպքում մեզ թույլատրեն շարունակել այդ հուշարձանների ուսումնասիրության գործը»:

№ 101 փաստաթուղթը վերաբերում է Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի՝ Թուրքիայից Հայաստան տեղափոխվելու խնդրի կարգավորմանը: Դրանից պարզվում է, որ կոմիտեի անդամ, համալսարանի պրոֆեսոր Գարեգին Հովսեփյանը հայ-թուրքական պատերազմից առաջ գտնվում էր Կարսում և քաղաքը թուրքերի ձեռքն անցնելուց հետո գերի է մնացել այստեղ: Դիմումում խնդրվում է միջնորդել տաճիկ իշխանության առաջ՝ «թույլատրելու նրան փոխադրվել Երևան, քանի որ նրա ներկայությունը մեր գործի համար սաստիկ անհրաժեշտ է»:

Որ սովետական կարգերի օրոք Թամանյանը Երևանում էր ու գործում էր գլխավոր ճարտարապետի պաշտոնում, վկայում են 1921 թ. հունվարի 11-ով թվագրված № 102 և 103 փաստաթղթերը:

Հայաստանում փետրվարյան իրադրությունների կապակցությամբ, 1921 թ. նա ընտանյոք հանդերձ, ի թիվս մի քանի նշանավոր հայ մտավորականների, փոխադրվում է Պարսկաստանի Թավրիզ քաղաք: Այնտեղ նա գործում է իր մասնագիտությամբ, միևնույն ժամանակ, ինչպես վկայում էր որդին՝ Դևորգը, շարունակել է զբաղվել Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակմամբ: Հաջորդ №№ 104, 105, 106, 107 և 110 փաստաթղթերը վերաբերում են Ալեքսանդր Թամանյանին Թավրիզից Երևան հրավիրելուն:

Հայաստանի լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի 1921 թ. հուլիսի 26-ով թվագրված հրավերի նամակում կարդում ենք.

«Մեծարգո ընկեր Թամանյանին

Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը ձեռնարկել է դիտական և գործնական լուրջ հիմքի վրա դնել Խորհրդային Հայաստանի տեխնիկական և գեղարվեստական կրթության գործը: Ձեր ղեկավարությունը այդ գործի կազմակերպման մեջ, ինչպես նաև Ձեր աշխատանքը Հնության պահպանության կոմիտեում համարում եմ դժվար փոխարինելի (ընդգծումը մերն է — Վ. Հ.): Ուստի գալիս եմ Ձեզ հայրենիք դառնալու առաջարկ անել: Ձեր գիտությունն ու աշխատակցությունը չի կարող բարձր գնահատական չգտնել Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից: Մեր շրջանում Դուք վայելում եք լիակատար վստահություն և հարգանք: Եվ դա ինձ հիմք է տալիս հուսալ, որ ստանալով սույն գրությունը Դուք չեք վարանի մեկնել Երևան և վերսկսել Ձեր ընդհատված աշխատանքները՝ նվիրված բանվորա-գյուղացիական հայրենիքի շինարարության գործին»:

Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ս. Արապիոնյանի (Լուկաչինի) 1922 թ. հունվարի 4-ով թվագրված նամակով կրկնված է Թամանյանին ուղղված առաջարկը հայրենիք վերադառնալու մասին, որում աշխատանքի տեղ է նշված Հայաստանի ժողտնտխորհդում (№ 108):

Թավրիզից 1922 թ. փետրվարի 12-ով թվագրված և Լուկաչինին ուղղված նամակում Ալեքսանդր Թամանյանը հայտնել է իր համաձայնությունը Երևան ժամանելու և բանակցելու (№ 109):

1923 թ. ապրիլին վերադառնալով Երևան, համաձայն արխիվային մի փաստաթղթի՝ ժողկոմխորհի քարտուղար Գ. Պարզյանի ստորագրությամբ տրված վկայականի, Ալեքսանդր Թամանյանը նշանակվել է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական կոմիսարների խորհրդին և Տնտեսական խորհրդակցությանն առընթեր ճարտարապետական-տեխնիկական ծրագրային գործերի խորհրդատու (№ 111):

Նույն տարվա հունիսի 9-ով թվագրված Հայաստանի ժողկոմխորհի որոշմամբ Ա. Թամանյանը նշանակվել է ժողկոմխորհին առընթեր բարձրագույն տեխնիկական խորհրդի նախագահ: Փաստաթղթում նշվում են նաև խորհրդի վրա դրվելիք պարտականությունները (№ 121):

Երբ ծանոթանում ես Ա. Թամանյանի այդ պաշտոնում տարբեր բնագավառներում ծավալած կազմակերպչական բնույթի գործունեությանը, որոնց մշտական ուղեկիցն է եղել ստեղծագործականը (Երևանի հատակագծի մշակումը, շենքերի նախագծումը, դրանց շինարարության կազմակերպումը և այլն), մնում ես զարմացած, թե ինչպես է նա կարողացել ժամանակ գտնել զբաղվելու նաև Հայաստանի հնությունների պահպանության գործով, որպես նախագահ գլխավորելով Հնությունների պահպանության կոմիտեն: Այդ հարցերով նա սկսել է զբաղվել, երբ կոմիտեն տակավին չէր վերստեղծված: 1923 թ. հունիսի 2-ով թվագրված Ա. Թամանյանի, Մ. Սարյանի և Ե. Լալայանի ստորագրությամբ մի նամակով նրանք լուսժողկոմին հայտնում են իրենց եզրակացությունը Երևանի բերդի տարածքում գտնվող Սարդարի պալատի ավերակների տեղում մարմնամարզական հրապարակ շինելու մասին. «Մենք ամսույս 2-ին տեղն ու տեղը քննեցինք ավերակները և եկանք այն եզրակացության, որ ոչ մի դեպքում թույլատրելի չէ քանդել ոչ մզկիթը և ոչ էլ պալատի մնացորդները» (№ 116):

Ա. Թամանյանը ուշադիր էր ոչ միայն հուշարձանների պահպանության, այլև այդ գործի նվիրյալների նկատմամբ: Երևանի քաղգործկոմի նախագահի տեղակալին ուղղված իր նամակով խնդրում է բնակարան հատկացնել Թորոս Թորամանյանին (28 հուլիսի 1923, փաստ. № 134):

Բացառիկ արժեքավոր է Հայաստանի ժողկոմխորհի նախագահին ուղղված զեկուցագիրը Հայաստանի հնությունների և գեղարվեստի հուշարձանների պահպանության մասին. «Հայաստանի ճարտարապետական հուշարձանների համաշխարհային նշանակությունը շատ է մեծ և հանրածանոթ: Նոցա ուսումնասիրությամբ պարապում են եվրոպական առաջնակարգ երկրները: ...մեր գեղարվեստի զարմանալի հիշատակները թանկ են մեզ համար ոչ միայն որպես պատմական դոկումենտներ, նոքա ծառայում են նաև որպես հիմք և անսպառ աղբյուր մեր ապագա ստեղծագործության համար» (ընդգծումը մերն է – Վ. Հ.): Այդ խոսքերով Թամանյանը նշում է ազգային ժառանգության կարևորությունը նոր ճարտարապետության ստեղծման գործում, ինչն ապացուցեց իր սեփական ստեղծագործությամբ: «Մեր պատմա-գեղարվեստական այդ հարստությունը,– շարունակում է Ա. Թամանյանը,– պարտադրում է մեզ մեծամեծ ջանքեր գործ դնելու ապահովելու համար նորա միանգամայն անձեռնմխելիությունը: Մենք կատարած չենք լինի մեր պարտքն ի դեմս կուլտուրական աշխարհի

և մեր ժողովրդի հետագա սերունդների, եթե չարտահայտենք մեր հոգածության ու խնամքի մաքսիմումը այդ հուշարձանների վերաբերմամբ»:

Զեկուցագիրն (1923 թ., նոյեմբերի 13, №157) ավարտվում է հնությունները և գեղարվեստական հուշարձանները պետական սեփականություն ճանաչելու մասին օրենքով (ինչպես Իտալիայում): Հաջորդ՝ №158 փաստաթուղթը ներկայացնում է հնությունների պահպանման վերաբերյալ Ա. Թամանյանի կազմած դեկրետի նախագիծը, բաղկացած 11 կետերից: Հայաստանի ժողկոմխորհի 1923 թ. նոյեմբերի 13-ի նիստի №24 արձանագրության համաձայն, հնությունների պահպանության մասին օրենքը ընդունվում է, ընդ որում Ա. Թամանյանին առաջարկված է համաձայնություն կայացնել Լուսժողկոմատի հետ՝ օրենքը խմբագրելու և կոմիտեն կազմակերպելու մասին:

Լուսժողկոմի նույն տարվա դեկտեմբերի 30-ի հրամանով Ալեքսանդր Թամանյանը նշանակվում է Հնությունների պահպանության կոմիտեի նախագահ, իսկ անդամներ՝ Թորոս Թորամանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Մարտիրոս Սարյանը և Աշխարհբեկ Լոռի Մելիք-Քալանթարը[7]:

Իր գործունեությունը կոմիտեն սկսեց հուշարձանների հաշվառումից: Թորոս Թորամանյանի կազմած ցուցակում նախապես գրանցված էր ընդամենը 80 հուշարձան: Տարիների ընթացքում կազմակերպված գիտարշավների շնորհիվ ցուցակը հետզհետե աճեց՝ իր մեջ առնելով նաև պեղումներով հայտնաբերվածները: Սկսվեցին նաև հուշարձանների լուսանկարումները, մասամբ նաև էքսպեդիցիոն չափագրումները: Նույն տարիներին սկզբնավորվեց հուշարձանների նորոգման գործը: Առաջիններից մեկը եղավ Ս. Էջմիածնի Մայր տաճարի հարավային խորանի վերականգնումը, որն ավերվել էր իր զանգակատան հետ միասին, 1921 թ. մարտի 21-ին: Խորանի ավերված գմբեթարդն ու ծածկը վերականգնվեցին Ա. Թամանյանի ու Թ. Թորամանյանի համատեղ ջանքերով[8]: Ա. Թամանյանին են վերագրվում Թալինի VII դարի կաթողիկեի, Վարդենիսի շրջանի XVII դարի եկեղեցու, Հաղբատի, Սանահնի և Կեչառիսի վանքերում մասնակի վերանորոգումները, Դեբեդ գետի վրա ձգված միջնադարյան կամրջի աջափնյա խելի հիմքերի ամրացումը, Հռիփսիմեի տաճարի հիմքերի նորոգման ու Երերուքի տաճարի ճակատի մասնակի վերանորոգման աշխատանքները[9]:

Ս. Էջմիածնի Մայր տաճարի հարավային խորանի վերանորոգման կապակցությամբ Ա. Թամանյանին վարձահատույց լինելու մասին է վկայում «Ալեքսանդր Թամանյան» ժողովածուում զետեղված №171 փաստաթուղթը, որում նշված է.

«Լսեցին. Տաճարի վերանորոգման հանձնաժողովի զեկուցումը ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանին Մայր Աթոռից նվեր տալու մասին:

---

7 Լ. Զ ո ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 249:

8 Զանգակատունը վերականգնվեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի գահակալության օրոք, 1959–1960 թթ.:

9 Յ ո ւ. Ա. Թ ա մ ա ն յ ա ն. Քարե տարեգրության վերականգնումը. Երևան, 1981, էջ 30:

Որոշեցին. Մայր Աթոռի գանձատնից հանել և նվիրել ճարտարապետ Թամանյանին ոսկյա մի ժամացույց (առանց շղթայի), երկու հատ արծաթոսկեջրած բաժակակալներ իրենց բաժակներով...»

№174 փաստաթուղթը, ստորագրված Հայաստանի ժողկոմխորհի քարտուղար Գ. Պարզյանի կողմից, հանձնարարական է Մ. Սարյանին, Ա. Թամանյանին և Ե. Շահազիզին Պետական բանկի պահեստներում գտնված թանգարանային արժեք ունեցող իրերի հետ ծանոթանալու և այդ մասին ժողկոմների խորհրդին զեկուցելու համար:

1924 թվականի ապրիլի 20-ին, Ա. Թամանյանի և Ա. Քալանթարի կողմից ստորագրված մի նամակով, դիմել են Ն. Մառին՝ Հայաստանում կատարվելիք հնագիտական աշխատանքները համատեղ անցկացնելու մասին (№190):

№№ 213, 214, 215 և 216 փաստաթղթերը լուսաբանում են կոմիտեի նախագահի գործունեության տարբեր ոլորտները: Առաջինը վերաբերում է Էջմիածնի մատենադարանի շենքի ապահովմանը, երկրորդը՝ Թ. Թորամանյանի հնագիտական աշխատանքներին աջակցելուն, երրորդը՝ Երևանի Կապույտ մզկիթի վերանորոգմանը, չորրորդը՝ Զվարթնոցի հնագիտական շրջանի պահպանությունն ապահովելուն: Հաջորդ՝ №№221, 222, 223, 228, 231, 233 և 235 փաստաթղթերը վերաբերում են կոմիտեի ընթացիկ գործունեությանը: Հիշատակելի է №231 փաստաթուղթը, որը վերաբերում է Թորոս Թորամանյանին: Լուսժողկոմ Ա. Մռավյանին ուղղված նամակում նշվում է, որ Թորամանյանը գտնվում է նյութական ծանր վիճակում և մտադիր է վաճառել իր կողմից կատարած լուսանկարները (301 հատ 13x18 սմ չափի, 448 հատ 18x24 սմ չափի): Խնդրվում է դրանք ձեռք բերելու համար կարգադրություն անել (30 հունվարի 1925 թ.):

Հայաստանի ժողկոմխորհին ուղղված Էջմիածնի մայրավանքի նոր վեհարանի շենքի տեխնիկական վիճակի մասին շինարարաարդյունաբերական սեկցիայի նախագահ Ա. Թամանյանը հարց է հարուցել դրա վերանորոգման և մնացած աշխատանքները ավարտելու մասին (թվագրված է 1925 թ. փետրվարի 18): Նույն սեկցիայի անունից Ա. Թամանյանը Անդրներառժողկոմատի առաջ հարց է հարուցել արժեքավոր գորգերի արտահանումը դադարեցնելու մասին: «Տեղեկություններ ունեմ,— գրում է նա,— որ Երևանում և ուրիշ վայրերում մասնավոր անձեր գնում են գորգեր Հայաստանի սահմաններից դուրս տանելու նպատակով: Կարծում եմ, որ գորգերի չհսկվող արտահանումը պետք է արգելվի, քանի որ ծրագրված է Հայաստանում կազմակերպել տնային գորգագործություն, որի համար մնացած գորգերի լավագույնները պետք է ծառայեն իբրև օրինակ» (№242, 4 մարտի 1925 թ.):

1925 թ. ապրիլի 15-ով թվագրված №250 փաստաթուղթը վկայում է, որ Հնությունների պահպանության կոմիտեն արգելել է Արտաշատ (Վերին Արտաշատ) գյուղի մոտակայքում գտնվող «Հնություններից մնացած հողակույտերը (Դվինի քաղաքատեղիի կավաշեն պարիսպների մնացորդները) երկրագործական նպատակով օգտագործել մինչև որ հիշված հնությունները կենթարկվեն հնագիտական ուսումնասիրության»:

№256, 1925 թ. մայիսի 16-ի նամակով, լուսժողկոմ Ա. Մռավյանին ուղղված նամակով Հնությունների պահպանության կոմիտեի նախագահը մեկ անգամ ևս հարց է հարուցում հայկական պատմական հուշարձանները այլ վայրերից Հայաստան բերելու մասին: Ստորև բերում ենք գրա ամբողջական բովանդակությունը. «Հայաստանի Հնությունների կոմիտեն պարտավորություն ունի մի կողմից պահպանել և ուսումնասիրել հանրապետության սահմաններում գտնվող պատմական հուշարձանները, մյուս կողմից հավաքել զանազան ժամանակներում երկրի տարագիր եղած այն պատմական բեկորները, որոնք գտնվում են մեր հանրապետությունից դուրս, ուրիշ թանգարաններում: Այգպիսի փորձեր արել է Վրաստանը՝ ռուսական թանգարաններից Թիֆլիս բերելով վրաց պատմությանը վերաբերող նմանօրինակ հուշարձանները: Ադրբեջանը կատարում է նույնը: Ժամանակն է, որ համապատասխան քայլեր արվի և մեր կողմից:

Այս կարևոր խնդրի մասին կոմիտեն որոշեց խնդրել Ձեր թույլտվությունը, թե կարո՞ղ է նա, որոշելով, որ ներկայումս Լենինգրադում է գտնվում գիտնական քարտուղար ընկ. Քալանթարը, գրել նրան այդ ուղղությամբ նախնական աշխատանքներ կատարելու, թե ինչեր կան Լենինգրադի և Մոսկվայի թանգարաններում, որոնք կարելի է բերել տալ Հայաստան և անել համապատասխան դիմում նրանց մասին»: Հաջորդ՝ №257 փաստաթուղթը (3 հունիսի 1925 թ.) նախահաշիվ է՝ ա) Արագածի հարավարևմտյան և Շիրակ, բ) Լոռի-Փամբակ գավառ, գ) Դվին-Արտաշատի շրջանները դիտական արշավախմբեր դրծուղելու ծախսերի մասին:

Էջմիածնի գավգործկոմին ուղղված 1925 թ. հունիսի 11-ի նամակով Հնությունների պահպանության կոմիտեի նախագահը խնդրում է Եղվարդում արգելել նոր եկեղեցու կցակառուցումը, «որը չքացնում է կարևոր հնությունը (խոսքը վերաբերում է գյուղի կենտրոնում գտնվող XIII դարի եռաստիճան գամբարան-եկեղեցուն — Վ. Հ.)»: Նույն հարցով կոմիտեի անունից (ստորագրությամբ Ա. Թամանյանի ու իր գիտական քարտուղարի պաշտոնակատար Գ. Լևոնյանի), մի գրություն ուղղված է Էջմիածնի հոգևոր խորհրդին: «Կոմիտեիս հասած տեղեկություններին նայելով,— նշված է գրությունում,— Եղվարդ գյուղում, պատմական արժեք ներկայացնող մատուռին կից տեղացիք կառուցում են նոր եկեղեցի, որով ծածկվում և վակվում է այդ մատուռի արևմտյան ճակատը:

Կոմիտես իր առանձին գրություններով Էջմիածնի գավգործկոմին և Աշտարակի իր ներկայացուցչին հրահանգել է միջոցներ ձեռք առնել առժամանակ դադարեցնելու շենքի կառուցումը, մինչև որ կոմիտեի կողմից այնտեղ կգա հատուկ լիազոր՝ տեղնուտեղը տնօրինելու, թե ինչ կերպով կարելի կլինի կառուցել եկեղեցին, առանց վնաս հասցնելու մատուռին:

Խնդրում ենք Գեղագույն հոգևոր խորհրդին իր բարոյական ազդեցությունը այս գործում, բացատրելու գյուղացիներին կոմիտեի իսկական նպատակը» (№261):

Ա. Թամանյանը հանգես է եկել նաև Հայաստանի սահմաններից ապօրինաբար դուրս հայտնված ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետության կարգավիճակ ստացած տարածքում գտնվող հայկական հուշարձանների պահպանության դիրքերում: Այդ մասին է վկայում լուսժողկոմ Ա. Մռավ-

յանին ուղղված, 1925 թ. օգոստոսի 20-ի նամակը: «Ագուլիսի նշանավոր հուշարձանը՝ Թովմա առաքյալի վանքը,– դրված է նամակում,– գտնվում է տեխնիկական վտանգավոր վիճակում: Նրան կործանումից փրկելու համար մոսկվաբնակ մի ագուլեցի իր վրա է վերցրել այդ հուշարձանի պահպանության և վերանորոգման ծախքերը:

Կոմիտես, թեմական խորհրդի հետևանքով, մանգատ է տվել վանքի վանահայր Տեր Նիկողայոսին և հրահանգ՝ նորոգումները կատարել միմիայն կոմիտեիս գրությամբ և ցուցումներով: Բայց, որպեսզի այդ կարևոր գործում Տեր Նիկողոսը գտնի անհրաժեշտ աջակցություն տեղական իշխանության կողմից, խնդրում եմ ժողկոմխորհին այդ խնդրի վերաբերյալ անել համապատասխան դիմում Նախկրայի (Նախիջևանի Ինքնավար Հանրապետության – Վ. Հ.) կառավարությանը» (№267):

Ստորև հիշատակելով փաստաթղթերի մի շարք, համառոտակի նշեմ դրանց բովանդակությունը: №277-ը վերաբերում է Հռիփսիմե և Գայանե տաճարների պահպանությունն ապահովող նոր որոշմանը, №300-ը՝ Գառնիի և Տրդատաբերդի շուրջը եղող այգին կոմիտեի իրավասությանը հանձնելուն, №301-ը՝ Ծաղկաձորի հուշարձանները պահպանելու համար նյութական օժանդակություն տրամադրելուն, №№ 305–306-ը՝ Հովսեփ Օրբելուն Երևան հրավիրելուն, №308-ը՝ Սևանի շրջակայքում Սենեքերիմ Տեր-Հակոբյանի հայտնաբերած հիերոգլիֆյան արձանագրություններին, №310-ը՝ այլ կազմակերպությունների կողմից Հայաստանում հնագիտական աշխատանքներ կատարելու կարգավիճակին ու այդ գործում կոմիտեի դերին, №314-ը՝ նորից Հռիփսիմե վանքի պահպանությանը, №315-ը՝ Սանահնի կամրջի վերանորոգմանը, №317-ը՝ Կովկասի պատմահնագիտական ինստիտուտի կողմից Հայաստանում դիտահետազոտական աշխատանքներ կատարելուն, №323-ը՝ Արմավիրում կատարվելիք պեղումների հանձնաժողովի կազմին, №324-ը՝ Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի միջև կնքած պայմանագրի նախագծին, №330-ը՝ ուղղված Պետհրատին՝ կոմիտեի «Օրագիր» պարբերականը, Թ. Թորամանյանի «Զվարթնոց», Ա. Խաչատրյանի «Խուրրի Միտանյան ժողովրդի պատմությունը» և Երվանդ Շահազիզի «Հին Երևանը» աշխատությունների հրատարակմանը:

Ա. Թամանյանն աջակցում էր հայկական ճարտարապետության վերաբերյալ աշխատություններ հրատարակող գիտնականներին (նաև օտարազգի), այդ առումով ուշագրավ են №№ 335 և 336 փաստաթղթերը: Դրանցից առաջինը Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Անրի Ֆոսիլիոնի նամակն է՝ ուղղված Ա. Թամանյանին, թվագրված 1928-ի նոյեմբերի 27-ով:

«Պարոն և սիրելի արվեստակից,

Պարոն Բալտրուշայտիսը ինձ հանձնեց Ձեր շատ գեղեցիկ նամակը, որի համար ես շտապում եմ հայտնել Ձեզ իմ շնորհակալությունները: Նա ինձ ասաց նույնպես այն բոլորը, ինչ որ նա պարտական է Ձեր մեծ գիտությանը, որից մենք օգտվում ենք, մի քանի թանկագին պլանների և գեղեցիկ լուսանկարների համար: Դուք շատ եք աշխատել նրա աշխատանքն ավելի հաստատուն և արդյունավետ դարձնելու համար, որքան հնարավոր է, դրա համար ես Ձեզ երախտապարտ եմ: Ձեր շնորհիվ և հնագիտական ընկերության (կոմիտեի) շնորհիվ մենք Սորբոնում կունենանք ամենահա-

ռուստ և ամենագեղեցիկ նյութերը, ինչ որ տալիս է արվեստի պատմությունը: Կարո՞ղ ենք արդյոք մենք Ձեզ խնդրել, հաղորդելու պարոն Աշխարհաբեկ Քալանթարին մեր շնորհակալության զգացմունքները իր գիտության և ազնվության համար:

Ես Ձեզ խնդրում եմ, պարոն նախագահ, իմ անկեղծ շնորհակալություններով հանդերձ ընդունել իմ խորին անկեղծության հավաստիքը:

Անրի Ֆոսիլիոն

Փարիզի համալսարանի պրոֆեսոր»:

Դրան հաջորդող № 336 փաստաթուղթը թվագրված է 1928 թ. դեկտեմբերի 5-ով, Յուրգիս Բալտրուշայտիսի[10] ռուսերեն նամակն է՝ ուղղված Ա. Թամանյանին:

«Մեծարգո և թանկագին Ալեքսանդր Իվանովիչ,

Շտապում եմ հեռավոր երկրից Ձեզ շնորհակալություն հայտնել այն հյուրընկալության համար, որն ինձ անհրաժեշտ էր և որը կարող եմ գնահատել միայն այժմ:

Դուք գիտեք, թե որքան կարևորություն է տրվում այժմ Հայաստանի ուսումնասիրմանը և մենք պարտական ենք Ձեզ Ձեր նախաձեռնած կոնկրետ քայլերի համար: Պարտ եմ հավաստիացնել, որ սկսված գործը չի խամրի:

Ինչ վերաբերում է ինձ, ապա, ես բարեհաջող հասա մինչև իմ տուն և հիմա չարչրկված եմ շատ շտապ ու կարևոր գործերով, որոնք խանգարեցին անմիջապես Ձեզ գրելուն: Հիմա այդ բոլորը փոքր-ինչ հանդարտվում է, և ես կարող եմ հանրագումարի բերել Ձեր կողմերում կատարած իմ աշխատանքի մասին: 600 լուսանկարները ստացվել են շատ հաջող, կլրացնեն մեր հավաքածուն և մի շարք արժեքավոր փաստեր ուժեղացնում են նրանց արժեքը:

Մեծ բավականությամբ եմ հիշում Երևանյան օրերը և հուսով եմ հաջորդ տարի կուտակել ևս մի քանի հիշողություններ...

Յուրգիս Բալտրուշայտիս»:

Կարևորում եմ նաև Երերույքի տաճարին վերաբերող, 1928-ի դեկտեմբերի 16-ով թվագրված № 338 փաստաթուղթը: Դա կոմիտեի նախագահ Ա. Թամանյանի գրությունն է, ուղղված ժողկոմխորհի նախագահին՝ Երերույքի տաճարի պահպանմանն աջակցելու մասին: «Տաս օր առաջ,— հայտնվում է նամակում,— ցրտերի պատճառով ընդհատվեցին Հնությունների պահպանության կոմիտեի կողմից ձեռնարկված Երերույքի բազիլիկայի նորոգման աշխատանքները, որոնք կատարվում էին հոկտեմբեր-նոյեմբերի ընթացքում և որով այդ տեսակի հուշարձանն ապահովվեց կործանման վտանգից»:

Բարձր գնահատական տալով հուշարձանին, հայտնում է, որ Լենինականի երկրաշարժի (1926 թ.) հետևանքով այն վտանգավոր ճեղքեր է ստա-

---

10 *Ծագումով լիտվացի է, մասնագիտությամբ՝ արվեստաբան: Ավարտել էր Փարիզի Սորբոնի համալսարանը, դասավանդել Կաունասի, Սորբոնի, Լոնդոնի և Նյու Յորքի համալսարաններում: 1927–1928 թթ. այցելել է Վրաստան և Հայաստան: Հեղինակն է ֆրանսերեն լեզվով Փարիզում լույս տեսած «Վրաստանի և Հայաստանի արվեստը» (1929 թ.) և «Հատվող կամարների պրոբլեմը և Հայաստանը» (1936 թ.): Հայերեն թարգմանությամբ լույս է տեսել (Երևան, 1973 թ.):*

ցել ու ներկայումս նրան կործանում է սպառնում: «Մինչև այժմ նորոգումների վրա ծախսված է 3791 ռուբլի, որից վճարված է 1650 ռուբլի, մնում է վճարել 2141 ռուբլի»: Վերջում հայտնվում է, որ «կատարված աշխատանքներով պետք է ապահովված համարել հուշարձանի գլխավոր մասի կայունությունը, իսկ նրա ընդհանրապես խախտված մասերի վերականգնումը մնում է եկող տարվան»: Կնչանակի Երերույքի տաճարի մասնակի վերանորոգումները տևել են մինչև 1929 թվականը:

Հնությունների պահպանության կոմիտեի գործունեության վերաբերյալ մնացյալ փաստաթղթերը թվագրված են 1929–1933 թվականներով (մինչև իր մահից երեք տարի առաջ): Դրանցից №341-ը, թվագրված 1929-ի հունվարի 18-ով, ուղղված լուսժողկոմ Ա. Մռավյանին խնդրանք է արգելել եկեղեցիներն իբրև ակումբ օգտագործելը, №342-ը՝ ուղղված Թալինի շրջգործկոմի նախագահին, շրջանի հնադարանի վիճակը բարելավելուն, №345-ը՝ Դիլիջանի գավառի Պողոս-քիլիսա գյուղում բացված դամբարանային իրերի ցուցակը կոմիտեին ուղարկելուն, №345-ը՝ Ոսկեպարի տաճարի լուսանկարը ու տեղեկություն վիճակի մասին, №351-ը՝ Ռուսաստանի լուսժողկոմին առընթեր գործող Կենտրոնական պետական վերականգնման արվեստանոցների դիրեկտոր Իգոր Գրաբարի նամակն է՝ աշնանը Հայաստան ժամանող գիտարշավի, դրա կազմի մասին: №352 փաստաթղթում, թվագրված 1929 սեպտեմբերի 13-ով, Ա. Թամանյանն իր ուրախությունն է հայտնում ակադեմիկոս Ի. Գրաբարին իր գլխավորած մասնագետների խմբով Հայաստան ժամանելու համար, խոստանում է ծանոթացնել հետաքրքրող նյութերին, մասնավորապես հին հայկական ձեռագրերին ու գրանցում պարունակվող դեկորատիվ արվեստի նմուշներին:

Իգոր Գրաբարին Ա. Թամանյանն իր 1930 թ. մարտի 8-ի նամակով (№367) խնդրում է մասնագետ գործուղել Երևան վերականգնելու համար 1131-ով թվագրված նորահայտ մի որմնանկար (հայտնաբերվել է իրացման ենթարկվող Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու բազմաշերտ որմնանկարների երրորդ շերտում):

Ն. Յա. Մառին ուղղված նամակով (№299, 25 մարտի 1930 թ.) Թամանյանը խնդրում է միջոցներ ձեռք առնել, որպեսզի Թիֆլիսում գնված և Մոսկվա փոխադրված կիլիկյան հայ նկարիչ Սարգիս Պիծակի ձեռագիրը պահվի երկրի սահմաններում: Ն. Յա. Մառին 1930 թ. հոկտեմբերին ուղղված նամակով (№376) լուսժողկոմ Ա. Եղիազարյանն ու Ա. Թամանյանը խնդրում են հանձն առնել հին Վաղարշապատում կատարվելիք պեղումների (որոնք սկսվել էին 1931-ի գարնանը) գիտական ղեկավարությունը:

Ժողովածուի վերջին փաստաթուղթը(№380) նամակ է 1931-ի նոյեմբերի 20-ին ուղղված Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին, իսկ 381-ը՝ կոմիտեի հատուկ հանձնաժողովի նիստի արձանագրությունն է: Առաջինում հարց է հարուցվում Երևանի բերդի մնացորդների պահպանության մասին՝ ներկայացնելով մասնագիտական առաջարկներ, իսկ երկրորդում կինոթատրոնի (հետագայում «Մոսկվա» կոչված) կառուցման կապակցությամբ Պողոս-Պետրոս եկեղեցու իրացմանը: Կոմիտեի կողմից առանձնացված մի հանձնաժողովի կողմից տեղում կատարած ուսումնասիրությունից պարզվել է, որ եկեղեցու քանդման և կինոյի կա-

ռուցման հետ կապված հողային աշխատանքները կատարվել են առանց մասնագետների կողմից հնագիտական հսկողության: Այդ պատճառով, մշակույթի բազմապիսի արժեքներ ոչնչացվել են: Որոշ վնասներ են պատճառվել նաև եկեղեցու ներսում եղած որմնանկարներին[11]: Կանխելու համար հետագա սխալները, հանձնաժողովը յոթ կետից բաղկացած հանձնարարականներ է արձանագրել ստորագրությամբ Ա. Թամանյանի, Ա. Քալանթարի, Երևանի գլխավոր ճարտարապետ Ն. Բունիաթյանի, Երևանի նորաստեղծ շինարարական ինստիտուտի տնօրեն Մ. Մազմանյանի, գիտնական Մորուսի (Մորուս Հասրաթյան – Վ. Հ.) և աշխղեկ Հ. Շահնազարյանի:

Զարմանք է պատճառում, թե ինչպես է նա կարողացել համատեղել իր բազում սլետական-կազմակերպչական պաշտոնները ծանրաբեռնված Երևանի վերակառուցման գլխավոր հատակագծի մշակման աշխատանքով (որն ավարտից հետո 1924-ին Հայաստանի ժողկոմխորհի կողմից հաստատվել է): Միաժամանակ մշակելով Հայաստանի Կառավարության տան, ժողտան (Օպերայի և բալետի թատրոնի), Երգէս–1-ի, Հանրային գրադարանի, Աստղադիտարանի, Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտի №1 և №3 մասնաշենքերի, Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտների, Բժշկական ինստիտուտի անատոմիկումի և բուժական մի քանի շենքերի ու այլ նախագծեր:

Հիրավի սխրանք կարելի է համարել իր ժողովրդի պատմական մեծ վերածնողին Ալեքսանդր Թամանյանի մատուցած աղգանվեր ծառայությունը:

---

11 Որմնանկարների արժեքավոր չերտերը հանվել, ամրացվել ու թանգարանացվել են: